

ծնի դուռը Երուսաղէմի արեւելեան դուռն է, որ ի հնուամբ կը կոչուէր դուռն Բենիամինի, եւ այլազգիները կը կոչեն զայն Պապ ըլ պապ, այսինքն դուռ ցեղից: Իսկ քրիստոնեաներս կը կոչենք Ս. Աստուածածնի դուռ՝ երկու պատճառով. առաջին՝ վասնզի Ս. Աստուածածնի ծննդեան տեղը մօտ է դրանս, երկրորդ՝ որովհետեւ այս դուռնէն դուրս կը գտնուի Ս. Աստուածածնի տապանը, Գեթսեմանիի ձորին մէջ: Դրան դուրսի կողմը կը գտնուին երկերկու առիւծներ քարափոր պատկերներով. «Եւ այս դրանս փայտն Սուրբ Յարութեան դուռն էր ասնն, վասն զի յոյժ վարպետաբար հիւսեալ է մուտախիլ և ազնիւ արհեստիւ» (Հան. էջ 75-76):

Շատ դարեր յետոյ Եւրոպացիք նոր դուռը կոչած են Ս. Ստեփանոսի անուամբ, վասնզի աւանդութիւն մը, ոչ հին քան տասն և չորրորդ դարն, կը բացատրէ թէ Ս. Ստեփանոս քարկոծուած էր ճամբուն վրայ ցցուած մերկ քարի մը վրայ, ոչ շատ հեռու Ս. Աստուածածնի եկեղեցիէն: Նոյն դուռը Խաչակիրներէն կոչուած է նաեւ Յովսափասի դուռ: Իսկ արգի գերմանախօս հրեաները նոյն դուռը կը կոչեն «das Loc wenthor», պարիսպին մուտքի միւս կողմին խոշոր քանդակներով շինուած զոյգ մը առիւծներուն պատճառաւ:

Պարիսպներու շինութեան մասին ալ հետեւեալը կը պատմուի. ԺԶ. դարուն վեհապետ մը Երուսաղէմ կողգայ ուխտի և հոն բնակած միջոցին հրաման կու տայ Տաճարին եւ քաղաքի պարիսպներուն շինութեան: Պարիսպներու շինութեան հսկողութիւնը կը յանձնէ երկու եղբայրներու՝ որոնք ճարտարապետներ էին: Անոնցմէ իւրաքանչիւրը շինութեան իր բաժինը